ՓԻԼԻՍՈՓԱՅՈՒԹՅՈՒՆ, PHILOSOPHY, ФИЛОСОФИЯ

ՖԱԼԻԲԻԼԻԶՄԸ ՈՐՊԵՍ ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՀԱՆՐԱՅԻՆ ԽՈՍՈՒՅԹԻ ԱՌՈՂՋԱՑՄԱՆ ԻՄԱՑԱԲԱՆԱԿԱՆ-ՄԵԹՈԴԱԲԱՆԱԿԱՆ ՀԻՄՔ *

ՀՏԴ 165.6/.8 *DOI: 10.52063/25792652-2023.4.19-86*

ԴԱՎԻԹ ԱՔԵԼՅԱՆ
Երևանի պետական համալսարանի փիլիսոփայության և հոգեբանության ֆակուլտետի փիլիսոփայության պատմության, տեսության և տրամաբանության ամբիոնի ասպիրանտ, ք. Երևան, Հայաստանի Հանրապետություն
davit.agelyan@ysu.am
ORCID: 0000-0002-0100-5773

Հոդվածի նպատակն է բացահայտել հայաստանյան ժամանակակից հանրային խոսույթի իմացաբանական պատկերը[1], ճշմարիտի և ոչ ճշմարիտի (կեղծիքի, սխալի) հասարակական ընկալումը և դրա խնդիրները, ինչպես նաև ֆալիբիլիզմի իմացաբանական-մեթոդաբանական դերն ու նշանակությունը հայաստանյան ժամանակակից հանրային խոսույթի առողջացման համատեքստում:

Առաջադրված նպատակին հասնելու համար ձևակերպվել են հետևյալ խնդիրները՝ վերլուծել հայաստանյան ժամանակակից հանրային խոսույթի և դրա իմացաբանական պատկերի վրա ազդեցություն ունեցող հիմնական գործոնները, ուսումնասիրել ճշմարիտի ու ոչ ճշմարիտի հասարակական ընկալման խնդիրները և ցույց տալ ֆալիբիլիզմի իմացաբանական-մեթոդաբանական նշանակությունը հանրային խոսույթի իմացաբանական պատկերի գնահատման և խնդիրների հաղթահարման գործում:

Հետազոտության ընթացքում օգտագործվել են բազմաթիվ բնագրեր, հոդվածներ և վերլուծություններ:

Հետազոտությունում կիրառվել են անալիզի, սինթեզի, ինդուկցիայի, դեդուկցիայի, համեմատության, համանմանության մեթոդները:

Հետազոտության արդյունքում եզրակացնում ենք, որ ֆալիբիլիզմը, հատկապես՝ լավատեսական ֆալիբիլիզմը, կարող է ունենալ իմացաբանական-մեթոդաբանական կարևոր նշանակություն հայաստանյան հանրային խոսույթի իմացաբանական խնդիրների հասկացման և հաղթահարման համար՝ ապահովելով ֆալիբիլիզմի, քննադատական ռացիոնալիզմի ու

* Հոդվածը ներկայացվել է 15.11.2023թ., գրախոսվել՝ 30.11.2023թ., տպագրության ընդունվել՝ 30.12.2023թ.:

[1] Խոսույթի, մասնավորապես՝ հանրային խոսույթի առնչությամբ «իմացաբանական պատկեր» հասկացությունը կիրառելով՝ նկատի ենք ունենում տվյալ խոսույթի շրջանակում ճմշարիտի և ոչ ճշմարիտի տարրերի, դրանց հասարակական ընկալման, ճանաչման և տարբերակման մեխանիզմների ամբողջությունը:

քննադատականության սկզբունքների տեղայնացումը և կիրառումը հանրային խոսույթում:

Եզրակացնում ենք նաև, որ ֆալիբիլիզմը կիրառելի է գիտելիքների լայն շրջանակում, մասնավորապես՝ հասարակական խնդրակարգում:

Հիմնաբառեր՝ *ֆալիբիլիզմ, հանրային խոսույթ, իմացաբանություն, հետարդիականություն, գիտելիք, համոզմունք, քննադատականություն, քննադատական ռացիոնալիզմ, սկեպտիցիզմ:*

Ներածություն

Հայաստանյան ժամանակակից հանրային խոսույթին դժվար է տալ մեկ միասնական հստակ բնութագիր, քանի որ այն ձևավորվում է ներքին և արտաքին մի շարք գործոնների ազդեցության ներքո՝ խիստ զգայուն լինելով ներհայաստանյան, տարածաշրջանային և ընդհանրապես աշխարհում տեղի ունեցող իրադարձությունների նկատմամբ: Միևնույն ժամանակ պետք է հաշվի առնել, որ այսօր հնարավոր չէ խոսել խոսույթի որևէ դրսևորման մասին՝ հաշվի չառնելով այն տարածաժամանակային համատեքստը, որում այն առաջանում և ծավալվում է: Ըստ այդմ՝ մի կողմից՝ հայաստանյան ժամանակակից հանրային խոսույթը պետք է դիտարկել հետարդիականության, մյուս կողմից՝ Հայաստանում հանրային խոսույթի ձևավորումն ապահովող միջավայրի և ներքին ու արտաքին գործոնների համատեքստում: Ընդհանուր առմամբ «խոսույթը անանուն, պատմական, ժամանակով և տարածությամբ որոշարկված կանոնների ամբողջություն է, որը որոշարկում է փոխազդեցության արտահայտման պայմանները տվյալ դարաշրջանում և սոցիալական, տնտեսական, աշխարհագրական կամ լեզվային տվյալ միջավայրի համար» (Фуко 119): Հետարդիական խոսույթի հիմնական բնորոշիչներից մեկը լեզուն է, որը միևնույն ժամանակ և՛ միջավայր է, և՛ միջոց է խոսույթի ձևավորման ու դրսևորման համար: Երկխոսությունը դառնում է ներսուբյեկտային և միջսուբյեկտային հաղորդակցման կարևորագույն բաղադրիչ, որն իր հերթին կարգավորվում է որոշակի «կոդերով ու ենթակոդերով»՝ վերծանման խնդրի առաջ կանգնեցնելով բանավոր կամ գրավոր երկխոսությունում ներգրավված սուբյեկտին (Սահակյան 15): Հայարփի Սահակյանը նկատում է՝ «անհատի ինքնագիտակցությունը տեքստերի ամբողջություն է, քանի որ գտնվում է «տեքստի ներսում», այսինքն՝ որոշակի պատմական գիտակցության կամ մշակույթի շրջանակներում» (Սահակյան 15): Հետևաբար լեզուն և երկխոսությունը, լինելով խոսույթի համատեքստային հարաբերականության հիմնական պատճառներից մեկը և անհատին մշտապես պահելով հասկացման որոշակի նեղ ու սահմանափակ շրջանակի տիրույթում, չեն կարող ապահովել իրականության ճշմարիտ արտացոլումը և նկարագրումը՝ այդկերպ գործնականում անհնար դարձնելով խոսույթի շրջանակում ճշմարտության ճանաչման և ճշմարիտի ու կեղծիքի անսխալական տարբերակման հնարավորությունը: «Այստեղից էլ բխում է հետարդիականության կարևորագույն դրույթներից մեկը՝ տեքստի աննույնականության ու գիտելիքի անհուսալիության դրույթը, քանի որ վերջիններս ձեռք են բերվում լեզվի միջոցով» (Սահակյան 24): Նշվածի օգտին են նաև խոսում դիտարկումների և փորձի արդյունքում ձևավորվելիք անսխալական գիտելիքի ձեռքբերման անհնարինությունը փաստող իմացաբանական մի շարք խնդիրներ, որոնք բազմիցս նկարագրվել են գիտության փիլիսոփայության և փիլիսոփայական իմացաբանության մի շարք ներկայացուցիչների կողմից: Այս համատեքստում հատկանշական է ***դիտարկման տեսական ազդվածության խնդիրը***, ըստ որի՝ դիտարկման և փորձի արդյունքում ստացված ցանկացած գիտելիք որևէ կերպ հիմնվում է նախկինում ընդունված էմպիրիկ տեսությունների վրա: Գիտական

վարկածները, էմպիրիկ տեսությունները և գիտելիքի այլ համակարգեր ամրագրվում են լեզվում և լեզվի միջոցով՝ առավելապես արտահայտվելով նկարագրվող երևույթի վերաբերյալ ձևակերպված էմպիրիկ (սինթետիկ) դատողությունների ամբողջությամբ: Եվ քանի որ դրանք էլ իրենց հերթին հիմնված են դիտարկումների ու փորձի վրա և կարող են ապագայում ներքին հակասականության կամ այլ խնդիրների պատճառով վարկածներին և տեսություններին վերանայման, փոխարինման կամ մերժվելու անհրաժեշտության առջև կանգնեցնել, ստացվում է, որ էմպիրիկ գիտելիքը միշտ սխալական է[1], և մենք երբեք չենք կարող երաշխիք ունենալ փորձի արդյունքում ստացված գիտելիքների անսխալականորեն ճշմարիտ լինելու վերաբերյալ (Boyd and Bogen 2021):

Պատահական չէ, որ հետարդիականության շրջանում ձևավորված և ծավալվող խոսույթները հաճախ բնորոշվում են «Post-truth» (հետճշմարտություն) հասկացությամբ՝ նկարագրելու այն «հանգամանքները, որոնցում օբյեկտիվ փաստերն ավելի քիչ ազդեցություն ունեն հասարակական կարծիքի ձևավորման վրա, քան հուզական կոչերը և անձնական համոզմունքները» (World of the year 2016): Ըստ Էռնեստո Լակլաուի՝ «Խոսույթը որպես այդպիսին օբյեկտիվության ստեղծման առաջնային ոլորտն է» (Laclau 68): Միևնույն ժամանակ դիսկուրսը հասարակական հարաբերությունների այն տիրույթն է, որտեղ «բազմաթիվ տեսակետներ ձեռք են բերում լսելու իրենց իրավունքը կամ ինչ-ինչ հանգամանքների հիման վրա զրկվում են դրանից» (Mkrtchyan 41): Հետևաբար հետարդիական խոսույթի «մակերևույթին մնալը», նույնիսկ որոշակի ճշմարտության կրող լինելով՝ այն լսելի և հասանելի դարձնելը դառնում են մրցակցության (հաճախ՝ անառողջ) առարկա, որին դիմանալու և հաղթելու համար միշտ չէ, որ ճշմարտության կրող լինելը կարող է որոշիչ և վճռական դեր ունենալ:

Հայաստանյան հանրային խոսույթի իմացաբանական պատկերը, ճշմարիտի և ոչ ճշմարիտի հասարակական ընկալումը և դրա խնդիրները

Վերը քննարկվածը օրինաչափորեն տարածվում է նաև հայաստանյան հանրային խոսույթի վրա, որը, լինելով հետարդիական խոսույթներին բնորոշ առանձնահատկությունների կրողը, միևնույն ժամանակ աչքի է ընկնում իր յուրակերպությամբ և խնդիրների շրջանակով: Լայն իմաստով, ըստ ներհայաստանյան խոսույթների, մասնավորապես՝ հանրային խոսույթի և դրա ձևավորման նկատմամբ ունեցած ազդեցության, հանրային խոսույթը Հայաստանում կարելի է ներկայացնել չորս հիմնական մակարդակով՝

1. պետության քաղաքական վերնախավը, ղեկավարությունը, պետական ինստիտուտները, լծակները և քաղաքական խոսույթի վրա անմիջական ազդեցություն ու դրանում ներկայացվածություն ունեցող սուբյեկտները,
2. արտաքին ազդեցության կենտրոնները (այլ պետություններ, հասարակական, պետական, միջազգային կազմակերպություններ),
3. ԶԼՄ-ները (ռադիո, հեռուստատեսություն, թվային մեդիա, սոցիալական ցանցեր),

[1] Այստեղ սխալականությունը բնորոշվում է որպես ձևավորված բոլոր համոզմունքների և գիտելիքների նկատմամբ մշտական և անօտարելի ռացիոնալ կասկածի պահպանում: Սա չի բացառում որևէ համոզմունքի կամ գիտելիքի՝ որոշակի ժամանակահատվածում և գիտելիքների համակարգում ճշմարիտ համարվելու հնարավորությունը, որը թույլատրվում է լավատեսական ֆալիբիլիզմի շրջանակում, այլ միայն պնդում է, որ տրված համոզմունքի և գիտելիքի նկատմամբ երբեք հնարավոր չէ բացառել ռացիոնալ կասկածը, այսինքն՝ դրանց սխալ լինելու (դրանցում սխալների առկայության) հնարավորությունը և բարեփոխման, վերանայման կամ/և փոխարինման անհրաժեշտությունը:

4. քաղաքացիական հասարակությունը (տեղական հասարակական կազմակերպությունները, ոչ տեղական կազմակերպությունների տեղական ներկայացուցչությունները, հասարակական ակտիվ խմբերը և համայնքները),
5. հասարակությունը՝ որպես հանրային խոսույթի շահառու և գործող սուբյեկտ (այդ թվում՝ անհատները, որոնք ունեն սեփական օրակարգերի ու խոսույթների ձևավորման կամ առկա օրակարգերի և խոսույթների ձևափոխման հավակնություններ):

Առաջին և երկրորդ մակարդակները առավելապես դրսևորվում են իրավաքաղաքական խոսույթների միջոցով՝ միևնույն ժամանակ խիստ մեծ և անմիջական ազդեցություն ունենալով հանրային խոսույթների վրա: Գևորգ Հակոբյանը նկատում է. «Իրավաքաղաքական ցանկացած խոսույթ, մանավանդ եթե այն կոնֆլիկտային է, անկախ ճշմարտության առկայությունից, սովորաբար պարունակում է ոչ ճշմարիտ տարրեր՝ պնդումներ, եզրահանգումներ, ինչպիսիք են սուտը, սխալը, մանիպուլյացիան, նարատիվը, քաղաքական միֆը, սիմուլյակրը և այլն» (Հակոբյան, Իրավաքաղաքական խոսույթի ոչ ճշմարիտ տարրերի շուրջ 32): Հայաստանյան հանրային խոսույթը հիանալի օրինակ է այնպիսի խոսույթի, որը գտնվում է նշված չորս մակարդակների անմիջական ազդեցության և ներգործության տիրույթում: Միևնույն ժամանակ հայաստանյան խոսույթների վրա անմիջական ազդեցություն ունեցող նշված և այլ գործոնների բազմազանությունը որոշակիորեն պայմանավորված է ազգային և մշակույթային մի շարք այլ առանձնահատկություններով ևս: Մասնավորապես Հայ առաքելական եկեղեցին՝ որպես ազգային ինստիտուտ, դարեր շարունակ եղել է ազդեցիկ կենտրոն և ուժ հասարակական, քաղաքական, մշակութային կյանքի կազմակերպման, հասարակության ուղղորդման, պետականազուրկ ժամանակաշրջաններում կառավարչի գործառույթների իրացման և ինքնության պահպանման համար: Հաշվի առնելով նաև Հայ առաքելական եկեղեցու՝ ՀՀ սահմանադրությամբ ամրագրված բացառիկ դերն ու նշանակությունը որպես հոգևոր-պրակտիկ կյանքի զարգացման բացառիկ դեր ունեցող ինստիտուտ՝ եկեղեցու և դրա ներկայացուցիչների դերը խիստ շոշափելի է դառնում ոչ միայն հայաստանյան կրոնական խոսույթի, այլ նաև հանրային խոսույթի կազմակերպման և վերջինիս արժեքային-բարոյական առավել ընդհանուր ուղենիշների ձևավորման գործում: Պետք է արձանագրել նաև հասարակական և քաղաքական այլ ինստիտուտների կարևորությունը հայաստանյան հանրային խոսույթի և վերջինիս իմացաբանական պատկերի ձևավորման գործում: Այս առումով առանձնակի կարևորություն ունեն տարբեր ժամանակաշրջաններում գործունեություն ծավալած ՀՀ նախագահների ինստիտուտները, վերջիններիս սպասարկող տարատեսակ կառույցները, քաղաքական ուժերը, կուսակցությունները, ինչպես նաև ՀՀ-ում գործող տեղական և միջազգային հասարակական կառույցներն ու քաղաքացիական հասարակության այլ ներկայացուցիչներ: Վերջիններիս գործունեությունը դրսևորվում է բազմաթիվ շերտերով և փոխկապակցված գործոններով: Կան տեղական կազմակերպություններ և քաղհասարակության ակտիվ խմբեր, որոնք առաջնորդվում են սեփական և ներհայաստանյան համատեքստից սերող օրակարգերով: Միևնույն ժամանակ կան տեղական այլ կազմակերպություններ և խմբեր ևս, որոնք ներկայացնում ու գործում են արտահայաստանյան այլ կառույցների միջոցներով և դիրքերից՝ սկզբունքորեն նոր օրակարգեր ու հետաքրքրություններ զարգացնելով հանրային և այլ խոսույթներում: Համանման պատկերը տեսանելի է նաև լրատվական դաշտում, որտեղ տեղական լրատվամիջոցների կողքին հաճախ շատ ավելի ակտիվ գործունեություն են ծավալում ոչ տեղական լրատվամիջոցները: Խնդիրն էլ ավելի է բարդանում, երբ ժամանակակից ինֆորմացիոն տեխնոլոգիաների, համացանցի և առավելապես սոցիալական ցանցերի օգնությամբ լրատվության տարածման գործառույթ են ստանձնում

անհատները և նույնականացման ոչ ենթակա օգտատերերը, որոնք իրենց հերթին կարող են շահագործվել վերոնշյալ ցանկացած ուժային կենտրոնի կողմից: Այս համատեքստում հայաստանյան հանրային խոսույթի իմացաբանական պատկերը հայտնվում է ազդեցության բազմաթիվ կենտրոնների անմիջական և անընդհատ ներգործության տիրույթում՝ զրկված լինելով համաժամանակյա ինքնանդրադարձի և ինքնաքննության հնարավորությունից: Հայաստանյան հանրային խոսույթի իմացաբանական պատկերը այսկերպ կորցնում է իր արժեքային բնութագիրը՝ չունենալով ճշմարիտի և ոչ ճշմարիտի տարանջատման ու հստակեցման իմացաբանական-մեթոդաբանական արդյունավետ գործիքակազմեր, և նույնիսկ առկայության դեպքում՝ դրանց պատշաճ և անհետաձգելի կիրառման հնարավորությունը: Մասնագիտական գրականության մեջ արծարծվող խնդիրների վերաբերյալ մեզանում առկա ուսումնասիրություններում կարելի է հանդիպել քննադատականության պակասի, գիտելիքի անհուսալիության, ճշմարիտի և ոչ ճշմարիտի տարրերի խնդիրների վերաբերյալ մեկնաբանությունների և վերլուծությունների, սակայն խոսույթների, մասնավորապես՝ հանրային խոսույթի և դրա իմացաբանական պատկերի առողջացման իմացաբանական-մեթոդաբանական հիմքերի ձևավորման և այս հարցում գիտության փիլիսոփայության որևէ հայեցակարգի հնարավոր նշանակության մասին վերլուծական փորձեր դեռևս չկան[1]: Հաշվի առնելով ձևակերպված հիմնախնդրի հրատապությունը, կարևորությունը և այստեսակ քննության բացակայությունը՝ հոդվածում մտասևեռվում ենք հենց այս հիմնախնդրի ուղղությամբ:

Հայաստանյան հանրային խոսույթը պետք է դիտարկել հատկապես ներհայաստանյան և համաշխարհային ճգնաժամերի, ներքաղաքական խնդիրների, նախապատերազմական, պատերազմական և հետպատերազմական իրադարձությունների ընթացքում, երբ ինֆորմացիոն հոսքերը ծավալային առումով սկսում են գերազանցել դրանք վերլուծելու, գնահատելու և քննադատելու հասարակական կարողություններին: Այս համատեքստում հետաքրքրական է կորոնավիրուսային (COVID-19) համավարակը, որը, որպես համաշխարհային անվտանգային սպառնալիք և իրադարձություն, շարունակում է մնալ լայն քննարկումների առարկա՝ ներգրավելով պետությունների և պետական ինստիտուտների, համաշխարհային և տեղական կազմակերպությունների, գիտնականների և փորձագետների, զանգվածային լրատվամիջոցների և սոցիալական ցանցերի, հասարակական տարբեր շերտերի, խմբերի և անհատների բավականին լայն շրջանակ: «Ինչ-որ իմաստով կարելի է ասել, որ այս քննարկումներին մասնակցում է ողջ մարդկությունը» (Հակոբյան, Կորոնավիրուսային

---

[1] Հայարփի Սահակյանը հետարդիականության համատեքստում անդրադառնում է գիտելիքի անհուսալիության խնդրին (ավելին տե՛ս Սահակյան, Հայարփի. Դիսկուրսը որպես հաղորդակցման սոցիալական համատեքստ. Միշել Ֆուկո. *Բանբեր Երևանի համալսարանի: Փիլիսոփայություն, հոգեբանություն*, ԵՊՀ հրատ., № 1 (16), 2015):

Գևորգ Հակոբյանը քննարկում է ոչ ճշմարիտ տարրերի խնդիրները իրավաքաղաքական խոսույթի համատեքստում (ավելին տե՛ս Հակոբյան, Գևորգ. Իրավաքաղաքական խոսույթի ոչ ճշմարիտ տարրերի շուրջ. *Բանբեր Երևանի համալսարանի: Փիլիսոփայություն, հոգեբանություն,* ԵՊՀ հրատ., հ. 11, №1 (31), Երևան, 2020, էջ 32–43; Կորոնավիրուսային համավարակի ներկայիս խոսույթի իմացաբանական որակման շուրջ. *Բանբեր Երևանի համալսարանի: Փիլիսոփայություն, հոգեբանություն*. ԵՊՀ հրատ. հ. 12, №1 (34), Երևան, 2021, էջ 44-54):

Մարիանա Սարգսյանը եզրակացնում է լրատվական բովանդակությունում կեղծը ճշմարիտից տարբերակելու գործում քննադատական մոտեցման կարևորման վերաբերյալ (ավելին տե՛ս Sargsyan, Mariana. “All truth is relative” or how to not be fooled in the post-truth age?. *Armenian Folia Anglistika,* 19, issue 1 (27), Yerevan, 2023, pp. 69–82):

համավարակի … 44): Հայաստանյան հանրային խոսույթը նույնպես անմասն չէ կորոնավիրուսային համավարակի շուրջ ծավալված քննարկումներից: Կորոնավիրուսի տարածման և վերջինիս «համավարակի» կարգավիճակ շնորհելու իրադարձությանը հաջորդեցին Առողջապահության համաշխարհային կազմակերպության կողմից առաջարկությունների և հանձնարարականների փաթեթների տրամադրումը երկրներին՝ տեղում համավարակի դեմ արդյունավետ պայքարի ծավալման նպատակով: Միևնույն ժամանակ ՀՀ կառավարությունը, ի դեմս Առողջապահության նախարարության, հանրությանն էր տրամադրում իր առաջարկությունները և պարտադրում սահմանափակումների քաղաքականությունը՝ տեղայնացնելով և հարմարեցնելով միջազգային փորձը ներհայաստանյան իրավիճակին ու իրականությանը: Գործընթացը ո՛չ Հայաստանում և ո՛չ էլ այլ երկրներում չէր ընթանում սահուն և կշռադատված: Մասնավորապես Հայաստանում «իրավաքաղաքական մի շարք խոշոր գործորդներ, պետական կառույցներ ու մասնագետներ համավարակին վերաբերող հարցերում հաճախ հակասում էին ինչպես միմյանց, այնպես էլ իրենք իրենց: Ավելին՝ պետության առաջին դեմքերից մեկը կարող էր խոսել սարսափելի իրադրության մասին, իսկ մեկ ուրիշը՝ հեգնել այդ տագնապը» (Հակոբյան, Կորոնավիրուսային համավարակի … 45):

Համավարակի ընթացքում ի հայտ էին գալիս տարատեսակ «փորձագետներ», չորակավորված մասնագետներ և համավարակի վերաբերյալ պաշտոնական դիրքորոշմանը հակադրվող դավադրապաշտական տեսություններ: Խնդիրն աննախադեպ մասշտաբների էր հասնում սոցիալական ցանցերի, թվային մեդիայի և տեխնոլոգիաների կիրառման պայմաններում: Այսօր համացանցը, թվային լրատվականները և սոցիալական ցանցերը հասարակության զգալի հատվածի համար ինֆորմացիայի և հատկապես լրատվության առաջնային աղբյուրներն են: «Սոցիալական ցանցերն այժմ ավելի ու ավելի են տարածում կեղծ լուրեր և դավադրապաշտական տեսություններ՝ վերածվելով նորօրյա ամենամեծ սպառնալիքներից մեկը: Հանրաճանաչ սոցիալական հարթակները վեր են ածվել «ուժային կառույցների», որոնք ապահովում են ապատեղեկատվության զանգվածային մասշտաբով տարածումը» (Kużelewska 2374): Ցանկացած ոք, ով տիրապետում է սոցիալական ցանցերից օգտվելու գործիքակազմերին և ունի համապատասխան հմտություններ, կարող է ձևավորել հանրային քննարկումներ, նախաձեռնություններ, հավաքներ, առցանց ու ոչ առցանց խմբեր և ամբողջական օրակարգեր՝ փոխելով, զարգացնելով կամ խեղաթյուրելով գործող խոսույթը: Ապատեղեկատվությունը և այսպես կոչված «fake news»-ը (կեղծ լուրերը) դարձել են սովորական տերմիններ, որոնք բնութագրում են ներկայիս լրատվական դաշտի որակական փոփոխությունները՝ անմիջականորեն ազդեցություն ունենալով հանրային խոսույթի իմացաբանական պատկերի և դրա ընկալման վրա (Sargsyan 69): Իսկ ներկայումս աշխարհում համավարակի նոր ալիքը և վարակի դեպքերի թվի աճը կրկին օրակարգ են վերադարձնում և առաջնային կարևորություն են հաղորդում այս համատեքստում արձանագրված խնդիրներին (World Health Organization 2023): Մարիանա Սարգսյանն արդարացիորեն նկատում է. «Հաղորդակցումը չի կարող տեղի ունենալ առանց ճշմարտության» (Sargsyan 71): Հաշվի առնելով այս հանգամանքը՝ հանրային խոսույթ մուտք գործող և շրջանառվող տեղեկատվական հոսքերում առկա թյուր, սխալ կամ կեղծ ինֆորմացիան և ապատեղեկատվությունը հիմնականում հանդես են գալիս ճշմարիտի և ոչ ճշմարիտի (ճշմարտանմանության, սխալի, կեղծիքի) որոշակի հավասարակշռություն ապահովող «ճշմարիտի փաթեթավորմամբ»: Հայաստանյան հանրային խոսույթի և դրա իմացաբանական պատկերի համար այստեսակ սպառնալիք են նաև ներհայաստանյան քաղաքական խոսույթի և քաղաքական դաշտի անկայունությունը կամ արտաքին անմիջական սպառնալիքները: Արտաքին որոշակի սպառնալիքների դրսևորվելը, որոնցից

հատկանշական են սահմանային տեղային միջադեպերը կամ լայնածավալ ռազմական գործողությունները, հաճախ ուղեկցվում է տեղեկատվական աննախադեպ հոսքերով, ապատեղեկատվության և կեղծ լուրերի տարածմամբ: Հանրային խոսույթում հուզական և իռացիոնալ տրամադրությունների ավելացմանը, ընդհանուր հոգեբանական ընկճվածությանը և թարմ ու ճշմարիտ տեղեկատվության պահանջի մեծացմանը զուգընթաց աճում է քարոզչական և ուղղորդված ապատեղեկատվական հոսքերը հանրային խոսույթում: Այսպիսի պայմաններում հասարակությունը դադարում է հստակորեն տարբերակել արտաքին և ներքին ինֆորմացիոն աղբյուրները, տարածվող տեղեկատվության ու ինֆորմացիայի ճշմարտության արժեքը, տարածվող լուրի տարածաժամանակային ու այլ էական հատկանիշներ: Խոսելով հասարակական խոսույթի մասին՝ Միշել Ֆուկոն գրում է. «Յուրաքանչյուր հասարակությունում խոսույթի ձևավորումը միաժամանակ վերահսկվում, ընտրվում, կազմակերպվում և վերաբաշխվում է որոշակի ընթացակարգերի միջոցով, որոնց դերն է արտացոլել դրա ուժն ու վտանգները, տիրապետել հնարավոր պատահականությանը, խուսափել դրա ծանր, ահռելի նյութականությունից» (Foucault 52):

Հիմք ընդունելով վերը քննարկվածը՝ կարելի է եզրակացնել, որ այսօր հայաստանյան հանրային խոսույթի շրջանակում ճշմարիտի և ոչ ճշմարիտի տարբերակման հնարավորությունը և գործիքակազմը խիստ սահմանափակ են: Խնդիրն էլ ավելի է բարդանում, եթե հաշվի ենք առնում գրեթե բոլոր խոսույթներին բնորոշ հարափոփոխությունը: Կան խոսույթներ, որոնք՝

1. փոփոխվում են օր օրի,
2. վերանում են այն գործողությունների հետ, որոնցում արտահայտվել են,
3. ընկած են խոսքի մի շարք նոր գործողությունների հիմքում, որոնցով ըմբռնվում են, փոխակերպվում, այլ կերպ ասած՝ խոսույթներ, որ գոյություն ունեն իրենց ձևավորումից անդին. անվերջորեն ասվում են, արդեն ասված են և դեռ պետք է ասվեն (Սահակյան 23):

Ձևավորված և քիչ թե շատ կայուն խոսույթներն այսօր, հաշվի առնելով սոցիալական ցանցերի գործոնը, կարող են դրսևորվել տարատեսակ կրկնությունների, մեկնաբանությունների տեսքով: «Շատ հաճախ առաջնային տեքստերն անէանում են և կորչում, իսկ երբեմն էլ մեկնաբանությունները (comments) զբաղեցնում են հենց խոսույթի տեղը» (Սահակյան 23-24): Այսպիսի պայմաններում խոսույթը կարող է զարգանալ, ձևափոխվել կամ ընդհատվել՝ շարունակվելով առաջնային աղբյուրից զրկված մեկ այլ ինքնուրույն խոսույթի: Մասնագիտական գրականությունում առաջարկվում են ձևակերպված խնդրի հաղթահարման տարբեր լուծումներ: Ըստ 2018թ. Եվրոպական հանձնաժողովի զեկույցի՝ հանրային խոսույթում ապատեղեկատվության և կեղծ լուրերի դեմ արդյունավետ պայքարելու համար անհրաժեշտ է՝

1. ընդլայնել առցանց լուրերի թափանցիկությունը,
2. խթանել մեդիա և տեղեկատվական գրագիտությունը,
3. մշակել գործիքներ, որոնք կօգնեն օգտատերերին և լրագրողներին ապատեղեկատվության դեմ պայքարում,
4. պաշտպանել լրատվամիջոցների էկոհամակարգի բազմազանությունն ու կայունությունը (European Commission 2018):

Այստեսակ առաջարկություններն ու պայքարի ուղիները առավելապես վերաբերում են խնդրի հետևանքների մեղմանը և ոչ այդքան խնդրի պատճառների արդյունավետ գնահատմանն ու հիմնարար լուծումների ձևակերպմանը: Հայաստանյան հանրային խոսույթի ախտորոշված խնդիրը մի շարք առումներով ունի իմացաբանական հիմքեր և բնույթ, ինչը նշանակում է, որ խնդրի լուծումն էլ պետք է

ենթադրի իմացաբանական որոշակի մոտեցումների առկայություն: Հայաստանյան ժամանակակից հանրային խոսույթում այլևս հստակորեն չեն գործում ճշմարիտի և ոչ ճշմարիտի (սխալի, կեղծի, մանիպուլյացիայի) ընկալման ու ճանաչման մեխանիզմներ, և չկան ճշմարիտի ու սխալի տարբերակման, սահմանազատման հստակ իմացանական-մեթոդաբանական հիմքեր: Այսպիսի պայմաններում հայտնի չէ, թե հասարակությունը՝ որպես հանրային խոսույթի սուբյեկտ, ինչպիսի իմացաբանական-մեթոդաբանական հիմքերից պետք է ելնի իրականության իմացաբանական պատկերի ընկալման, գնահատման և իրականության վերաբերյալ առավել հավաստի ու ընկալելի համոզմունքների, գիտելիքների ձևավորման, դրանց հիմնավորման և հանրային խոսույթի առողջացման համար:

Ֆալիբիլիզմը որպես հայաստանյան հանրային խոսույթի առողջացման իմացաբանական-մեթոդաբանական հիմք

Իմացաբանական-մեթոդաբանական նման գործառույթ և նշանակություն կարող է ունենալ գիտության փիլիսոփայության և փիլիսոփայական իմացաբանության ժամանակակից հայեցակարգերից **Ֆալիբիլիզմը**, որն այսօր ընդունելի է գիտական համայնքի լայն շրջանակների կողմից: Այն թույլ է տալիս համատեղել երկու կարևոր իրողություններ, որոնք այլ հայեցակարգերի պարագայում հաճախ անհամատեղելի են. ***մարդիկ սխալական են, սակայն, այնուամենայնիվ, հնարավոր է ունենալ որոշակի գիտելիքներ*** (Akelyan 75): Ֆալիբիլիզմի, մասնավորապես՝ լավատեսական ֆալիբիլիզմի[1] համաձայն՝ անսխալականությունը, բացարձակ հիմնավորվածությունը և անկասկածելիությունը անհրաժեշտ չեն գիտելիքների ձեռքբերման և հավաստի իմացություն ունենալու համար: Կարելի է ունենալ գիտելիքներ և հիմնավոր համոզմունքներ, որոնք, այսօր համարվելով ճշմարիտ, սկզբունքորեն կարող են կասկածի տակ առնվել, վերափոխվել կամ հերքվել ապագայում՝ վերածվելով սխալի: Ֆալիբիլիզմի օգտին է խոսում փորձի և էմպիրիկ գիտելիքների սխալական բնույթը, որը փաստող հանգամանքներից են փիլիսոփայական իմացաբանության շրջանակում բազմիցս քննարկված ***դիտարկման տեսական ազդվածության, ինդուկցիայի և զգայությունների խնդիրները*** (Akelyan 77-78): Սխալներից երաշխավորված չեն նաև ֆորմալ-մաթեմատիկական տեսությունները և դրույթները, որոնք գիտության զարգացման ընթացքում բազմիցս վերանայվել, փոփոխվել և սահմանափակվել են իրենց կիրառելիության տիրույթում: Այս է պատճառը, որ գիտական համայնքի մի շարք ներկայացուցիչներ, ունենալով բարձր ճշգրտության տվյալներ և փորձերի հավաստի արդյունքներ, համավարակի ընթացքում բազմիցս սխալվում էին իրենց կանխատեսումներում՝ վստահեցնելով, որ փորձերի, հետազոտությունների և դրանց շրջանակում անընդհատ սխալվելու հնարավորությունը թույլ է տալիս բարելավել իմացությունը և ավելի արդյունավետ պատրաստվել ընդդեմ ի հայտ եկած խնդիրների: Ըստ Կառլ Փոփերի՝ «գիտական տեսությունները հնարավոր չէ ապացուցել, հերքել կամ լիարժեքորեն հիմնավորել», քանի որ մեր բոլոր գիտելիքները և համոզմունքները մշտապես ենթակա են ռացիոնալ կասկածների (Поппер 72): Եթե սխալները անօտարելի և ատրիբուտիվ են ճանաչողությանը և անխուսափելիորեն առկա են իմացությունում, ապա դրանցից սովորելը դառնում է անհրաժեշտություն և իմացության բարելավման պայման: Առավել խնդրահարույց տեսություններից ու դրույթներից հնարավոր է ավելի շատ գիտելիքի և իմացության ձեռքբերում (Akelyan 81): «Սխալներից սովորելը

[1] Լավատեսական կամ մեղմ ֆալիբիլիզմը դիրքորոշում է այն մասին, որ մեր որոշ գիտելիքներ կարող են լինել անսխալական, սակայն միաժամանակ նաև պնդում է, որ դա իրականում այնքան էլ էական չէ, քանի որ անսխալականությունը (ինֆալիբիլիզմը), որպես պայման, անհրաժեշտ չէ գիտելիքի, դրա ձեռք բերման և հիմնավորման համար: Ավելին տե՛ս Kraft, T. Scepticism, Infallibilism, Fallibilism., Discipline Filosofiche 22 (2), 2012, pp. 54-55.

ռացիոնալության հատկանիշ է, որն էլ ապահովում է գիտելիքների աճը» (Kekes 301): Հայաստանյան հանրային խոսույթի համատեքստում ֆալիբիլիզմը կարող է ունենալ իմացաբանական-մեթոդաբանական կարգավորման գործառույթ և նշանակություն: «Ելնելով ռացիոնալ կասկածի և հավանական սխալականության իմացաբանական հիմքերից, ֆալիբիլիզմը և, մասնավորապես, լավատեսական ֆալիբիլիզմը, կարող է ունենալ մեթոդաբանական-կարգավորող գործառույթ ճանաչողության գործընթացում և ձևավորված իմացությունում սխալների հայտնաբերման և այն սխալներից մաքրելու ու սխալները չեզոքացնելու համար՝ այդ կերպ ապահովելով գիտելիքի աճը և առավել հիմնավոր ու հավաստի իմացության ձեռքբերման հնարավորությունը» (Akelyan 82): Արժեքային և իմացաբանական առավել ընդհանուր սկզբունքների ու կողմնորոշիչների բացակայության պայմաններում ֆալիբիլիզմը կարող է հավակնել հայաստանյան հանրային խոսույթի առավել ընդհանուր իմացաբանական ուղենիշերի համակարգի դերին, որի շրջանակում ձևակերպված և ամրագրված իմացաբանական մոտեցումները թույլ կտան խոսույթի մասնակիցներին առաջնորդվել սխալների հնարավորության, չափավոր կասկածի, ռացիոնալ ճանաչողության և քննադատականության հիմնարար սկզբունքներով: Ֆալիբիլիզմը՝ որպես հայաստանյան հանրային խոսույթի առողջացման իմացաբանական-մեթոդաբանական հիմք՝

1. հանդես է գալիս չափավոր և առավելապես մեթոդաբանական նշանակություն ունեցող սկեպտիցիզմի դիրքերից՝ այդկերպ հաջողությամբ խուսափելով ծայրահեղ սկեպտիցիզմից, իմացաբանական ռելյատիվիզմից, իմացաբանական ֆունդամենտալիզմից և դոգմատիզմից՝ միջանկյալ դիրք զբաղեցնելով ծայրահեղական միտումներ ունեցող հայեցակարգերի նկատմամբ: Լավատեսական ֆալիբիլիզմը կարող է նպաստել հանրային խոսույթում ծայրահեղական մոտեցումների մեղմանը, շրջանցմանը և հաղթահարմանը՝ ապահովելով քննադատականության գործիքակազմերի կիրառելիության լայն տիրույթ (Աքելյան 84),
2. արժևորում է չափավոր կասկածը որպես իմացության նկատմամբ քննադատական-ինքնահայեցողական հայացք և գիտելիքների աճի նախապայման,
3. հնարավոր է համարում քննադատական ռացիոնալիզմի մի շարք սկզբունքների տեղայնացումը և դրանց կիրառելիության ապահովումը ոչ միայն զուտ իմացաբանական-գիտաբանական, այլ նաև գիտելիքների և ճանաչողության այլ ոլորտներում, ինչպիսիք են սոցիալական ճանաչողությունը և խոսույթը,
4. ապահովում է իմացաբանական-մեթոդաբանական ամուր հիմքեր ժամանակակից հանրային խոսույթների համատեքստում քննադատականության վերարժորման և վերջինիս արդյունավետ տեղայնացման համար,
5. առաջ է մղում գիտելիքի կիրառելիության տիրույթի խնդիրը՝ հնարավոր համարելով տարածաժամանակային և համատեքստային որոշակի հանգամանքներով պայմանավորված և/կամ սահմանափակված գիտելիքի իմացաբանական արժեքի (ճշմարիտի կամ ոչ ճշմարիտի) փոփոխականությունը,
6. առաջնային է համարում գիտելիքների հիմնավորման հիմնախնդիրը: Եթե հնարավոր չէ ունենալ որևէ երաշխիք տրված գիտելիքի և համոզմունքի անսխալականության վերաբերյալ, և հնարավոր չէ համոզմունքները, գիտելիքները և տեսությունները հիմնավորել անսխալականորեն, ապա «ճշմարիտ և ոչ ճշմարիտ (սխալ)» հակադրությունը փոխարինվում է «առավել հիմնավոր և պակաս հիմնավոր» հակադրությամբ,

7. հետապնդում է հավանական սխալականության սկզբունքը: Սա մշտապես ապահովում է ռացիոնալ կասկածը համոզմունքների, գիտելիքների, իսկ հանրային խոսույթի համատեքստում տեղի ունեցող իրադարձությունների և լուրերի նկատմամբ: Բայց և այնպես այն հնարավոր է համարում հիմնավորվածության և փաստարկվածության որոշակի մակարդակ ունեցող գիտելիքների և իմացության ձեռքբերումը:

Տեղեկատվական և ինֆորմացիոն հոսքերում կեղծ լրատվության և ապատեղեկատվությունների դեմ պայքարի մասին խոսելով՝ Մարիանա Սարգսյանը եզրակացնում է, որ ***միայն բովանդակության նկատմամբ քննադատական մոտեցմամբ է հնարավոր ճանաչել կեղծ լրատվությունը, ապատեղեկատվությունը և, ընդհանուր առմամբ, ճշմարիտը և ոչ ճշմարիտը, ինչպես նաև արդյունավետորեն հակազդել այստեսակ խնդիրներին*** (Sargsyan 79): Որպեսզի քննադատականությունը, ռացիոնալ և չափավոր սկեպտիցիզմը և ֆալիբիլիզմի առավել ընդհանուր սկզբունքներն ու մոտեցումներն արդյունավետ լինեն ձևակերպված խնդրի համատեքստում, անհրաժեշտ է բազմակողմանի մոտեցում այս հարցում: Ստեղծված իրավիճակում լուծումը հնարավոր է երկու մոտեցմամբ, որոնցից յուրաքանչյուրը, առանձին վերցված, անհրաժեշտ և, միասին վերցված, պարտադիր է խնդրի հասկացման և հնարավոր լուծումների մշակման համար:

Առաջին մոտեցմամբ հայաստանյան հանրային խոսույթի իմացաբանական պատկերի առողջացման նպատակը և խնդիրը պետք է ձևակերպվի ու հասցեագրվի «վերևից»՝ պետության, և քաղաքական իշխանության կողմից՝ պատվիրակվելով գործող պետական ինստիտուտներին և իրացվելով նախևառաջ քաղաքական խոսույթում: Այնուհետև ֆալիբիլիզմի և քննադատական ռացիոնալիզմի առավել ընդհանուր սկզբունքների որդեգրումը հանրային խոսույթում կարող է ապահովել առողջ մթնոլորտ քաղաքական և ոչ քաղաքական բանավեճերի, արդյունավետ, կշռադատված ու փաստարկված որոշումների կայացման, կառուցողական քննադատության ու ինքնանդրադարձի համար: Այնուամենայնիվ, այսպիսի իմպերատիվը կարող է հասարակական առավել լայն շերտերին արդյունավետ կերպով չհասցեագրվել՝ վերջնարդյունքում վերածվելով փոխադարձ անվստահության, ծայրահեղ սկեպտիցիզմի և «ամեն բան հարաբերական է» ապակառուցողական սկզբունքների ձևավորմանն ու տարածմանը: Երկրորդ մոտեցումը ենթադրում է կրթության և հանրակրթության ակտիվ դերը հայաստանյան հանրային խոսույթի առողջացման գործում: Հանրակրթությունը՝ որպես հասարակության արժեքային մոտեցումների, իմացաբանական կողմնորոշիչների և հիմնարար գիտելիքների ձևավորման դարբնոց, ի դեմս դպրոցի, կարող է նպաստել Հայաստանի ապագայի անմիջական շահառուների՝ երեխաների, երիտասարդների և գալիք սերունդների շրջանում քննադատականության, ռացիոնալ մտածողության և տեղեկատվական մարտահրավերներին դիմակայելու համար անհրաժեշտ այլ հմտությունների զարգացմանը: Քաղաքացիական հասարակության ներկայացուցիչները, ի դեմս տեղական կազմակերպությունների, նույնպես կարող են կարևոր նշանակություն ունենալ քննարկված սկզբունքների և մոտեցումների տարածման և իրացման գործում: Նշված երկու մոտեցումների համաժամանակյա և արդյունավետ կիրառման պարագայում ֆալիբիլիզմի և քննադատական ռացիոնալիզմի առավել ընդհանուր սկզբունքները կարող են ներդրվել և արագորեն ինտեգրվել Հայաստանի հանրային, քաղաքական և այլ խոսույթներում որպես ռացիոնալ և քննադատական մտածողության ապահովման իմացաբանական-մեթոդաբանական հենասյուներ՝ հիմք դնելով ախտահարված հասարակական խոսքի և մտքի առողջացմանը:

Եզրակացություն

Ամփոփելով խոսքը՝ կարելի է եզրակացնել, որ ֆալիբիլիզմը, հատկապես՝ լավատեսական ֆալիբիլիզմը, կարող է ունենալ իմացաբանական-մեթոդաբանական կարևոր դեր և նշանակություն հայաստանյան հանրային խոսույթի ձևավորման, իրականության իմացաբանական պատկերի հանրային ընկալման, խոսույթի շրջանակում ճշմարիտի և ոչ ճշմարիտի տարրերի գնահատման, տարբերակման և, ի վերջո, քննադատականության և քննադատական ռացիոնալիզմի առավել ընդհանուր սկզբունքների կիրառմամբ հասարակական խոսքի և մտքի առողջացման և հանրային խոսույթի առավել օբյեկտիվ իմացաբանական պատկերի ձևավորման համար: Մասնավորապես ֆալիբիլիստական հայեցակարգի հիմնական սկզբունքների և մոտեցումների տեղայնացումը հայաստանյան հանրային խոսույթի համատեքստում կիրառելիության լայն շրջանակ կարող է ապահովել չափավոր և առավելապես մեթոդաբանական նշանակություն ունեցող սկեպտիցիզմի, քննադատական ռացիոնալիզմի, հավանական սխալականության և մի շարք այլ ռացիոնալ ու քննադատական սկզբունքների համար: Այս նպատակին հասնելու համար հարկավոր է ապահովել քաղաքական-իմպերատիվ և հասարակական-հանրակրթական մոտեցումների համաժամանկյա կիրառումը, որի արդյունքում հնարավոր կլինի հայաստանյան հանրային խոսույթին վերադարձնել ռացիոնալության, քննադատականության և առողջ երկխոսության տիրույթ: Կատարված քննությունը թույլ է տալիս պնդել, որ ֆալիբիլիզմը կարող է կիրառվել գիտելիքի բավականին լայն տիրույթում՝ չսահմանափակվելով զուտ իմացաբանական-գիտաբանական խնդրակարգով և կիրառվելով ինչպես հասարակական խնդրակարգում, այնպես էլ միջգիտակարգային այլ ոլորտներում:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Աքելյան, Դավիթ. Ֆալիբիլիզմի ակունքները անտիկ փիլիսոփայությունում. *Գիտական Արցախ*, №3 (18), 2023:
2. Հակոբյան, Գևորգ. Իրավաքաղաքական խոսույթի ոչ ճշմարիտ տարրերի շուրջ. *Բանբեր Երևանի համալսարանի*: *Փիլիսոփայություն, հոգեբանություն*, ԵՊՀ հրատ., h. 11, №1 (31), 2020:
3. ---, Կորոնավիրուսային համավարակի ներկայիս խոսույթի իմացաբանական որակման շուրջ. *Բանբեր Երևանի համալսարանի: Փիլիսոփայություն, հոգեբանություն,* ԵՊՀ հրատ. h. 12, №1 (34), 2021:
4. Սահակյան, Հայարփի. Դիսկուրսը որպես հաղորդակցման սոցիալական համատեքստ. Միշել Ֆուկո. *Բանբեր Երևանի համալսարանի*: *Փիլիսոփայություն, հոգեբանություն,* ԵՊՀ հրատ., № 1 (16), 2015:
5. Поппер, Карл. Объективное знание: Эволюционный подход. 4-е изд., ЛЕНАНД, Москва, 2022, стр. 384. (72)
6. Фуко, Мишель. *Археология знания*. Ника-Центр, Киев, с. 208, 1996.
7. Akelyan, Davit. “Epistemological and Methodological Aspects and Problems of Conceptual Debate of Fallibilism and Infallibilism”. *Region and the World Scientific-Analytical Journal*, volume XIV, № 6 (49), pp. 74-82, 2023.
8. Boyd, Nora Mills and James Bogen. “Theory and Observation in Science”. *The Stanford Encyclopedia of Philosophy*, Stanford University, Zalta N. E. Winter 2021 edition, https://plato.stanford.edu/entries/science-theory-observation/. Accessed: 19 Dec 2023.

9. European Commission, A Multi-Dimensional Approach to Disinformation: Report of the Independent High Level Group on Fake News and Online Disinformation, 2018. https://coinform.eu/wp-content/uploads/2019/02/EU-High-Level-Group-on-Disinformation-A-multi-dimensionalapproachtodisinformation.pdf.
Accessed 24.12.2023.

10. Foucault, Michel. *The Order of Discourse*, In: Untying the Text: A Poststructuralist Reader, ed. and transl. By Rober Young, London, Boston, pp. 51-78, 1981.

11. Kekes, John. "Fallibilism and Rationality". *American Philosophical Quarterly*, Vol. 9, № 4, University of Illinois Press, pp. 301-309, 1972.

12. Kraft, Tim. "Scepticism, Infallibilism, Fallibilism". *Discipline Filosofiche,* 22 (2), pp. 49-70, 2012.

13. Kużelewska, Elżbieta, and Mariusz Tomaszuk, "Rise of Conspiracy Theories in the Pandemic Times". *International Journal for the Semiotics of Law*, vol. 35,6, pp. 2373-2389, 2022.

14. Laclau, Ernesto. *On Populist Reason*, London and New York, p. 276, 2007.

15. Mkrtchyan, Naira. "The Nature and Status of the Political: Discourses on the Political and Political Discourses". *Banber Yerevani hamalsarani,* Philosophy, Psychology, 143.4, №2, pp. 36-44, 2014.

16. Sargsyan, Mariana. ""All Truth is Relative" or How to not bBe Fooled in the Post-Truth Age?". *Armenian Folia Anglistika*, 19, issue 1 (27), pp. 69–82, 2023.

17. World Health Organization, COVID-19 Epidemiological Update, Edition 162, published 22 December 2023, https://www.who.int/publications/m/item/covid-19-epidemiological-update---22-december-2023.
Accessed 24.02.2023.

18. World of the year 2016. Oxford University Press. https://languages.oup.com/word-of-the-year/2016/. Accessed: 19 Dec 2023.

WORKS CITED

1. Aqelyan, Davit'. «Falibilizmi akunqnery' antik p'ilisop'ayut'yunum». Gitakan Arcax, ["The Sources of Fallibilism in Ancient Philosophy", Scientific Artsakh] №3 (18), 2023. (in Armenian)

2. Fuko, Mishel'. Arheologija znanija. Nika-Centr, Kiev, [The Archaeology of Knowledge. Nika-Center, Kyiv] 1996. (in Russian)

3. Hakobyan, Gevorg. «Iravaqaghaqakan xosuyt'i och twshmarit tarreri shurj». Banber Erevani hamalsarani, P'ilisop'ayut'yun, Hogebanut'yun, EPH hrat., ["On the Non-True Elements of the Right-Political Discourse". Bulletin of Yerevan University E: Philosophy, Psychology, YSU publishing house] h. 11, №1 (31), 2020. (in Armenian)

4. ---, «Koronavirusayin hamavaraki nerkayis xosuyt'i imacabanakan orakman shurj». Banber Erevani hamalsarani, P'ilisop'ayut'yun, Hogebanut'yun, EPH hrat. ["On the Gnoseological Qualifications of the Present Discourse of the Coronavirus Pandemic". Bulletin of Yerevan University E: Philosophy, Psychology, YSU publishing house] h. 12, №1 (34), Mayis 2021. (in Armenian)

5. Popper, Karl. Ob#ektivnoe znanie: Jevoljucionnyj podhod. 4-e izd., LENAND, [Objective Knowledge: An Evolutionary Approach. 4th edition, LENAND] 2022, Moskva. (in Russian)

6. Sahakyan, Hayarp'i. «Diskursy' orpes haghordakcman socialakan hamateqst. Mishel Fuko». Banber Erevani hamalsarani, P'ilisop'ayut'yun, Hogebanut'yun, EPH hrat., ["Discourse as a Social Context of Communication. Michel Foucault". Bulletin of Yerevan

University E: Philosophy, Psychology, YSU publishing house] 2015 № 1 (16). (in Armenian)

FALLIBILISM AS AN EPISTEMOLOGICAL-METHODOLOGICAL BASIS FOR TREATING MODERN PUBLIC DISCOURSE IN ARMENIA

DAVIT AKELYAN
Yerevan State University,
Faculty of Philosophy and Psychology,
Chair of History, Theory and Logic of Philosophy, Ph.D. Student
Yerevan, the Republic of Armenia

The purpose of the article is to reveal the epistemological picture of modern public discourse in Armenia, the public perception of true and non-true (fake, error) and its problems, as well as the epistemological-methodological role and significance of fallibilism in the context of the treatment of modern public discourse in Armenia.

To achieve the stated goal, the following objectives were formulated: to analyze the main factors influencing modern public discourse in Armenia and its epistemological picture, to study the problems of public perception of true and non-true, and to show the epistemological-methodological significance of fallibilism in evaluating the epistemological picture and overcoming problems of public discourse.

Many originals, articles and analyzes were used in the research. The methods of analysis, synthesis, induction, deduction, comparison, analogy were used in the research.

As a result of the research, we concluded that fallibilism and especially optimistic fallibilism can have an important epistemological-methodological significance for understanding and overcoming the epistemological problems of Armenian public discourse, ensuring the localization and effective application of the most general principles of fallibilism, critical rationalism and criticality in public discourse. The conducted research allows us to claim that fallibilism is also applicable in a wide range of areas of knowledge, in particular social problems.

Keywords: *fallibilism, public discourse, epistemology, postmodernity, knowledge, belief, criticism, critical rationalism, skepticism.*

ФАЛЛИБИЛИЗМ КАК ЭПИСТЕМОЛОГО-МЕТОДОЛОГИЧЕСКАЯ ОСНОВА ОЗДОРОВЛЕНИЯ СОВРЕМЕННОГО ОБЩЕСТВЕННОГО ДИСКУРСА В АРМЕНИИ

ДАВИД АКЕЛЯН
аспиранткафедры истории, теории и логики
философии факультета философии и психологии
Ереванского государственного университета,
г. Ереван, Республика Армения

Цель статьи – раскрыть гносеологическую картину современного общественного дискурса в Армении, общественное восприятие истины и неистины (фейка, заблуждения) и его проблемы, а также гносеологическую-методологическую роль и значение фаллибилизма в контексте восстановление современного общественного дискурса в Армении.

Для достижения заявленной цели были сформулированы следующие задачи: проанализировать основные факторы, влияющие на картину современного общественного дискурса в Армении и ее гносеологический образ, изучить проблемы общественного восприятия истины и неистины, а также показать гносеологическое-методологическое значение фаллибилизма в оценке гносеологического картина публичной речи и преодолении проблем.

В исследовании использовано множество оригинальных и аналитических материалов и статей. В исследовании использовались методы анализа, синтеза, индукции, дедукции, сравнения, аналогии.

В результате исследования мы пришли к выводу о том, что фаллибилизм и особенно оптимистический фаллибилизм могут иметь важное гносеолого-методологическое значение для понимания и преодоления гносеологических проблем армянского общественного дискурса, обеспечения локализации и применения принципов фаллибилизма, критического рационализма и критичности в публичном дискурсе. Был сделан также вывод о том, что фаллибилизм применим в широком спектре знаний, особенно в социальных проблемах.

Ключевые слова: *фаллибилизм, общественный дискурс, гносеология, постмодернизм, знание, убеждение, критика, критический рационализм, скептицизм.*